Հանրապետություն	256	39.5%	357	-29.3%	505	564	29.1%	728	-26.7%	993

Աղյուսակ 3.5-3-ում ներկայացված է 2022 թվականի առաջին եռամսյակում օտարերկրյա քաղաքացիների կողմից գնված և վաճառված անշարժ գույքերի համամասնությունը հանրապետությունում գրանցված առուվաճառքների գործարքներում ըստ գույքի տեսակների.

Աղյուսակ 3.5-3

Գույքի տեսակ		Առուվաճառքի գործարքների քանակ	Օտարերկրյա քաղաքացիների կողմից գնված անշարժ գույք			Օտարերկրյա քաղաքացիների կողմից վաճառված անշարժ գույք		
			քանակ	%	տեսակարար կշիռը նմանատիպ գործարքներում	քանակ	%	տեսակարար կշիռը նմանատիպ գործարքներում
1	Բնակարան	4,009	158	44.3%	3.9%	324	44.5%	8.1%
2	Անհատական բնակելի տուն	1,802	61	17.1%	3.4%	156	21.4%	8.7%
3	Արտադրական նշ. շին	177	14	3.9%	7.9%	3	0.4%	1.7%
4	Հասարակական նշ. շին.	560	20	5.6%	3.6%	19	2.6%	3.4%
5	Ավտոտնակ	554	24	6.7%	4.3%	21	2.9%	3.8%
6	Հող	4,997	80	22.4%	1.6%	205	28.2%	4.1%
6ա	Ա/թ գյուղատնտ. նշ. հող	2,926	0	0.0%	0.0%	117	16.1%	4.0%
Ընդամենը		12,099	357	100.0%	3.0%	728	100.0%	6.0%

Աղյուսակ 3.5-4-ում ներկայացված է 2022 թվականի առաջին եռամսյակում օտարերկրյա քաղաքացիների կողմից գնված և վաճառված անշարժ գույքերի քանակական համեմատությունը 2021 թվականի առաջին և չորրորդ եռամսյակների նկատմամբ.

Աղյուսակ 3.5-4

		Օտարերկրյա քաղաքացիների կողմից գնված անշարժ գույք				Օտարերկրյա քաղաքացիների կողմից վաճառված անշարժ գույք					
		2021 թվակ անի առաջ ին եռամս յակ	փոփոխումը	2022 թվակ անի առաջ ին եռամս յակ	փոփոխումը	2021 թվակ անի չորրորդ եռամս յակ	2021 թվակ անի առաջ ին եռամ սյակ	փոփոխումը	2022 թվակ անի առաջին եռամս յակ	փոփոխումը	2021 թվակ անի չորրորդ եռամ սյակ
1	Բնակարան	109	45.0%	158	-37.5%	253	206	57.3%	324	-21.2%	411
2	Անհատական բնակելի տուն	53	15.1%	61	-33.7%	92	145	7.6%	156	-26.4%	212
3	Արտադրական նշ. շին.	5	2.8 անգամ	14	2.8 անգամ	5	2	50.0%	3	-66.7%	9
4	Հասարակական. նշ. շին	11	81.8%	20	0.0%	20	18	5.6%	19	0.0%	19
5	Ավտոտնակ	24	0.0%	24	-35.1%	37	10	2.1 անգամ	21	-32.3%	31
6	Հող	54	48.1%	80	-18.4%	98	183	12.0%	205	-34.1%	311
6ա	Ա/թ գյուղատնտ. նշ. հող	1	1-ով պակաս	0	2-ով պակաս	2	109	7.3%	117	-33.5%	176
Ընդամենը		256	39.5%	357	-29.3%	505	564	29.1%	728	-26.7%	993

Աղյուսակ 3.5-5-ում ներկայացված է 2022 թվականի առաջին եռամսյակում օտարերկրյա քաղաքացիների կողմից գնված, իսկ Աղյուսակ 3.5-6-ում՝ օտարերկրյա քաղաքացիների կողմից վաճառված անշարժ գույքերի համամասնությունները ըստ պետությունների և տարածաշրջանների:

Աղյուսակ 3.5-5

Պետության անվանումը	Բնակարան	Բնակելի տուն	Արտադ. նշ. շին.	Հասար. նշ. շին.	Ավտոտնակ	Հող	ա/թ գյուղ. նշ.	Ընդամենը
Ռուսաստանի Դաշնություն	104	28	4	5	21	36	0	198
ԱՄՆ	11	16	0	9	3	16	0	55
Իրան	5	1	1	0	0	2	0	9
Միքիա	0	0	0	0	0	0	0	0
Եվրոպական պետություններ	22	5	2	3	3	18	0	53
ԱՊՀ պետություններ, բացառությամբ ՌԴ	12	5	0	3	4	0	0	24
Այլ պետություններ	4	6	0	0	0	8	0	18
ԸՆԴԱՄԵՆԸ	158	61	7	20	31	80	0	357

Աղյուսակ 3.5-6

Պետության անվանումը	Բնակարան	Բնակելի տուն	Արտադ. նշ. շին.	Հասար. նշ. շին.	Ավտոտնակ	Հող	ա/թ գյուղ. նշ.	Ընդամենը
Ռուսաստանի Դաշնություն	232	126	1	10	16	166	109	551
ԱՄՆ	26	10	0	6	1	10	2	53
Իրան	7	2	0	1	1	5	0	16
Միքիա	1	0	0	0	0	0	0	1
Եվրոպական պետություններ	29	6	2	2	2	4	1	45
ԱՊՀ պետություններ, բացառությամբ ՌԴ	22	10	0	0	0	13	4	45
Այլ պետություններ	7	2	0	0	1	7	1	17
ԸՆԴԱՄԵՆԸ	324	156	3	19	21	205	117	728

Աղյուսակ 3.5-7-ում ներկայացված է 2022 թվականի առաջին եռամսյակում օտարերկրյա քաղաքացիների կողմից գնված և վաճառված անշարժ գույքերի քանակական համեմատությունը 2021 թվականի առաջին և չորրորդ եռամսյակների նկատմամբ:


Աղյուսակ 3.5-7

Պետության անվանումը	Օտարերկրյա քաղաքացիների կողմից գնված անշարժ գույք					Օտարերկրյա քաղաքացիների կողմից վաճառված անշարժ գույք				
	2021 թվականի առաջին եռամսյակ	փոփոխումը	2022 թվականի առաջին եռամսյակ	փոփոխումը	2021 թվականի չորրորդ եռամսյակ	2021 թվականի առաջին եռամսյակ	փոփոխումը	2022 թվականի առաջին եռամսյակ	փոփոխումը	2021 թվականի չորրորդ եռամսյակ
Ռուսաստանի Դաշնություն	139	42.4%	198	-27.2%	272	458	20.3%	551	-31.2%	801
ԱՄՆ	34	61.8%	55	-31.3%	80	23	130.4%	53	-18.5%	65
Իրան	23	-60.9%	9	-57.1%	21	16	0.0%	16	33.3%	12
Սիրիա	1	1-ով պակաս	0	1-ով պակաս	1	0	1-ով ավել	1	0.0%	1
Եվրոպական պետություններ	29	82.8%	53	-35.4%	82	26	73.1%	45	-4.3%	47
ԱՊՀ պետություններ, բացառությամբ ՌԴ	16	50.0%	24	20.0%	20	31	45.2%	45	-15.1%	53
Այլ պետություններ	14	28.6%	18	-37.9%	29	10	70.0%	17	21.4%	14
ԸՆԴԱՄԵՆԸ	256	39.5%	357	-29.3%	505	564	29.1%	728	-26.7%	993

3.6 Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների վերլուծություն

3.6.1 Հանրապետությունում 2022 թվականի առաջին եռամսյակում իրականացվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի 4,009 գործարք: 2022 թվականի առաջին եռամսյակում հանրապետությունում գրանցված բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը 2021 թվականի չորրորդ եռամսյակի համեմատ նվազել է 18.1 %-ով, 2021 թվականի առաջին եռամսյակի համեմատ՝ աճել 28.2 %-ով:

Գծապատկեր 3.6-1-ում ներկայացված է 2022 թվականի առաջին եռամսյակում հանրապետությունում իրականացված բնակարանների առուվաճառքի գործարքների տոկոսային բաշխվածությունը ըստ Երևան քաղաքի և մարզերի:



Աղյուսակ 3.6-1-ում ներկայացված է 2022 թվականի առաջին եռամսյակում հանրապետությունում իրականացված բնակարանների առուվաճառքի գործարքների քանակական համեմատությունը 2021 թվականի առաջին և չորրորդ եռամսյակների նկատմամբ:

Աղյուսակ 3.6-1


	2021 թվականի առաջին եռամսյակ	փոփոխումը	2022 թվականի առաջին եռամսյակ	փոփոխումը	2021 թվականի չորրորդ եռամսյակ
Երևան	2,020	26.5%	2,556	-23.7%	3,352
Արագածոտն	36	36.1%	49	25.6%	39
Արարատ	95	6.3%	101	-12.9%	116
Արմավիր	126	5.6%	133	-21.8%	170
Գեղարքունիք	68	-8.8%	62	-27.1%	85
Լոռի	190	7.9%	205	-23.8%	269
Կոտայք	281	84.0%	517	4.2%	496
Շիրակ	158	19.6%	189	5.0%	180
Սյունիք	74	35.1%	100	6.4%	94
Վայոց ձոր	33	-6.1%	31	82.4%	17
Տավուշ	47	40.4%	66	-15.4%	78
Հանրապետություն	3,128	28.2%	4,009	-18.1%	4,896

3.6.2 Երևան քաղաքում 2022 թվականի առաջին եռամսյակում իրականացվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի 2,556 գործարք, 2022 թվականի առաջին եռամսյակում Երևան քաղաքում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը 2021 թվականի չորրորդ եռամսյակի համեմատ նվազել է 23.7 %-ով, իսկ 2021 թվականի առաջին եռամսյակի համեմատ՝ աճել 26.5 %-ով:

Երևան քաղաքում 2022 թվականի առաջին եռամսյակում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակի առավել բարձր տոկոսաչափ՝ 18.1 %, արձանագրվել է Կենտրոն իսկ առավել ցածրը՝ 0.2 %՝ Նուբարաշեն վարչական շրջաններում:

Գծապատկեր 3.6-2-ում ներկայացված է 2022 թվականի առաջին եռամսյակում Երևան քաղաքում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակական բաշխվածությունը ըստ վարչական շրջանների:

Գծապատկեր 3.6-2



Աղյուսակ 3.6-2-ում ներկայացված են 2022 թվականի առաջին եռամսյակում Երևան քաղաքում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների պայմանագրային գների և վաճառահանված բնակարանների առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների շուկայական միջինացված գները՝ 1 մ² մակերեսի հաշվարկով, ըստ վարչական շրջանների և տարածագնահատման գոտիների:

Աղյուսակ 3.6-2

Վարչական շրջան	2021 թվականի առաջին եռամսյակ	փոփոխումը	2022 թվականի առաջին եռամսյակ	փոփոխումը	2021 թվականի չորրորդ եռամսյակ
Կենտրոն միջին	606,600	14.8%	696,400	3.5%	672,600
Կենտրոն (Գոտի 1)	749,000	15.4%	864,350	4.2%	829,700
Կենտրոն (Գոտի 2)	600,100	21.1%	726,800	7.1%	678,400
Կենտրոն (Գոտի 3)	500,200	22.5%	612,700	5.7%	579,400
Կենտրոն (Գոտի 4)	445,700	22.2%	544,800	5.3%	517,400
Կենտրոն (Գոտի 5)	376,400	16.9%	439,900	4.2%	422,300
Արաբկիր միջին	435,800	13.1%	493,100	3.3%	477,400
Արաբկիր (Գոտի 3)	496,400	7.7%	534,500	1.9%	524,400

Արաբկիր (Գոտի 4)	482,200	7.3%	517,300	1.1%	511,700
Արաբկիր (Գոտի 5)	399,400	16.3%	464,500	3.5%	448,900
Արաբկիր (Գոտի 7)	306,000	20.0%	367,300	4.9%	350,100
Քանաքեռ-Զեյթուն միջին	313,800	15.9%	363,600	4.3%	348,700
Քանաքեռ-Զեյթուն (Գոտի 4)	368,700	10.9%	408,800	2.4%	399,200
Քանաքեռ-Զեյթուն (Գոտի 5)	326,300	15.7%	377,600	3.1%	366,400
Քանաքեռ-Զեյթուն (Գոտի 6)	328,000	8.5%	356,000	1.6%	350,500
Քանաքեռ-Զեյթուն (Գոտի 7)	292,000	5.4%	307,900	3.3%	298,000
Նոր-Նորք միջին	292,800	6.6%	312,000	0.2%	311,500
Նոր-Նորք (Գոտի 5)	349,700	5.0%	367,100	0.9%	364,000
Նոր-Նորք (Գոտի 6)	310,200	5.6%	327,700	0.6%	325,700
Նոր-Նորք (Գոտի 7)	291,200	2.2%	297,500	-1.0%	300,400
Նոր-Նորք (Գոտի 8)	257,000	5.4%	270,900	-1.4%	274,800
Էրեբունի միջին	280,500	12.9%	316,600	3.6%	305,600
Էրեբունի (Գոտի 5)	324,900	15.7%	376,000	4.4%	360,050
Էրեբունի (Գոտի 6)	292,700	15.1%	336,950	3.0%	327,000
Էրեբունի (Գոտի 7)	302,000	9.1%	329,400	2.6%	321,000
Էրեբունի (Գոտի 8)	248,800	16.1%	288,800	2.3%	282,200
Էրեբունի (Գոտի 9)	212,700	13.8%	242,000	3.1%	234,700
Շենգավիթ միջին	296,800	9.4%	324,600	1.9%	318,450
Շենգավիթ (Գոտի 5)	346,900	6.2%	368,500	0.7%	366,000
Շենգավիթ (Գոտի 6)	312,100	7.5%	335,400	0.3%	334,300
Շենգավիթ (Գոտի 7)	304,900	3.4%	315,200	0.2%	314,500
Շենգավիթ (Գոտի 8)	281,900	10.5%	311,500	0.8%	309,000
Շենգավիթ (Գոտի 9)	250,500	9.8%	275,100	1.8%	270,300
Դավթաշեն միջին	314,100	14.4%	359,300	4.5%	343,800
Դավթաշեն (Գոտի 5)	300,300	18.0%	354,500	4.4%	339,700
Դավթաշեն (Գոտի 7)	336,300	9.4%	367,800	2.5%	358,700
Աջափնյակ միջին	302,700	10.6%	334,700	1.2%	330,700
Աջափնյակ (Գոտի 5)	311,400	15.8%	360,500	2.1%	353,100
Աջափնյակ (Գոտի 6)	351,400	2.1%	358,700	0.1%	358,300
Աջափնյակ (Գոտի 7)	299,400	10.9%	331,900	0.8%	329,300
Աջափնյակ (Գոտի 8)	286,400	-2.4%	279,400	-0.8%	281,700
Մալաթիա-Սեբաստիա միջին	280,800	12.9%	317,000	3.0%	307,700
Մալաթիա-Սեբաստիա (Գոտի 5)	400,000	N/A	N/A	N/A	N/A
Մալաթիա-Սեբաստիա (Գոտի 6)	300,700	9.5%	329,300	2.0%	322,900
Մալաթիա-Սեբաստիա (Գոտի 7)	295,000	12.5%	332,000	4.2%	318,500
Մալաթիա-Սեբաստիա (Գոտի 9)	275,000	4.4%	287,000	0.1%	286,800
Ավան միջին	286,800	11.2%	318,900	3.0%	309,550
Ավան (Գոտի 5)	309,800	10.3%	341,700	3.8%	329,100
Ավան (Գոտի 6)	298,200	12.7%	336,100	4.0%	323,100
Ավան (Գոտի 7)	273,300	15.2%	314,750	2.7%	306,400
Ավան (Գոտի 8)	218,700	7.3%	234,700	4.4%	224,800
Նուբարաշեն միջին	174,700	10.3%	192,700	2.3%	188,350
Նուբարաշեն (Գոտի 10)	180,300	13.3%	204,350	2.5%	199,300
Նուբարաշեն (Գոտի 11)	170,000	9.5%	186,200	2.0%	182,600

Գնային փոփոխությունների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2022 թվականի առաջին եռամսյակում Երևան քաղաքում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1 մ² մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները 2021 թվականի չորրորդ եռամսյակի համեմատ աճել է 2.9 %-ով, իսկ 2021 թվականի առաջին եռամսյակի համեմատ՝ 12.4 %-ով:

Ծանոթություն

Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների շուկայական միջին գները տրված են ըստ ՀՀ կառավարության 04.06.2020թ. N 1023-Ն որոշմամբ հաստատված տարածագնահատման գոտիների:


*N/A-նշված գոտում միջին գնի հաշվարկման համար 1 տարվա ընթացքում բավարար քանակով գործարքներ չեն գրանցվել

3.6.3 2022 թվականի առաջին եռամսյակում մարզերում վաճառվել է բազմաբնակարան բնակելի շենքերի 1,453 բնակարան, ընդ որում՝ բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների 8.0 %-ը գրանցվել է գյուղական բնակավայրերում:

2022 թվականի առաջին եռամսյակում մարզերում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը 2021 թվականի չորրորդ եռամսյակի համեմատ նվազել է 5.9 %-ով, իսկ 2021 թվականի առաջին եռամսյակի համեմատ՝ աճել 31.1 %-ով:

Գծապատկեր 3.6-3-ում ներկայացված է 2022 թվականի առաջին եռամսյակում մարզերում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակական բաշխվածությունը.

Գծապատկեր 3.6-3



Աղյուսակ 3.6-3-ում ներկայացված են 2022 թվականի առաջին եռամսյակում մարզերի քաղաքներում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների պայմանագրային գների, վաճառահանված բնակարանների առաջարկվող գների և մասնագիտացված կազմակերպության կողմից անշարժ գույքի գների վերաբերյալ տրամադրված տվյալների վերլուծության արդյունքում ձևավորված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների շուկայական միջինացված գները՝ 1մ² մակերեսի հաշվարկով.

Մարզ	Քաղաք	2021 թվականի առաջին եռամսյակ	փոփո խումը	2022 թվականի առաջին եռամսյակ	փոփո խումը	2021 թվականի չորրորդ եռամսյակ
Արագածոտն	Աշտարակ	132,200	19.4%	157,900	3.3%	152,900
	Ապարան	80,200	13.5%	91,000	4.6%	87,000
	Թային	71,500	8.3%	77,400	3.1%	75,100
Արարատ	Արտաշատ	131,000	17.2%	153,500	3.9%	147,700
	Մասիս	128,500	18.1%	151,800	4.5%	145,200
	Վեդի	112,500	11.8%	125,800	2.4%	122,800
	Արարատ	95,500	19.0%	113,600	5.2%	108,000
Արմավիր	Վաղարշապատ	160,500	20.2%	193,000	7.0%	180,300
	Արմավիր	108,600	16.5%	126,500	5.1%	120,400
	Մեծամոր	77,400	17.2%	90,700	6.0%	85,600
Գեղարքունիք	Սևան	80,900	20.9%	97,800	6.1%	92,200
	Գավառ	51,000	23.3%	62,900	7.3%	58,600
	Մարտունի	100,300	6.7%	107,000	3.4%	103,500
	Վարդենիս	45,100	10.0%	49,600	5.5%	47,000
	Ճամբարակ	35,800	5.0%	37,600	3.3%	36,400
Լոռի	Վանաձոր	81,500	30.1%	106,050	6.8%	99,300
	Ստեփանավան	55,200	12.7%	62,200	5.8%	58,800
	Սպիտակ	87,850	27.8%	112,300	6.9%	105,100
	Ալավերդի	42,600	18.5%	50,500	7.0%	47,200
	Տաշիր	52,100	7.9%	56,200	3.5%	54,300
	Թումանյան	20,100	11.4%	22,400	7.7%	20,800
	Ախթալա	36,200	11.3%	40,300	4.1%	38,700
Կոտայք	Արովյան	192,200	22.4%	235,200	6.7%	220,400
	Նոր Հաճն	131,800	13.2%	149,200	2.8%	145,100
	Բյուրեղավան	115,600	14.8%	132,700	5.2%	126,200
	Եղվարդ	130,200	13.7%	148,100	5.3%	140,700
	Հրազդան	70,900	21.2%	85,900	5.9%	81,100
	Ծաղկաձոր	282,400	21.1%	342,000	6.8%	320,100
	Զարենցավան	83,500	20.6%	100,700	5.6%	95,400
Շիրակ	Գյումրի	103,100	23.8%	127,600	5.6%	120,850
	Արթիկ	63,200	16.1%	73,400	5.2%	69,800
	Մարալիկ	46,700	14.6%	53,500	4.9%	51,000
Սյունիք	Գորիս	138,100	7.0%	147,700	2.9%	143,500
	Կապան	111,700	10.7%	123,700	5.1%	117,700
	Սիսիան	80,300	7.6%	86,400	4.5%	82,700
	Մեղրի	100,000	5.8%	105,800	1.1%	104,700
	Քաջարան	94,900	11.2%	105,500	4.1%	101,300
Վայոց ձոր	Վայք	80,900	13.1%	91,500	6.4%	86,000
	Եղեգնաձոր	116,350	5.9%	123,200	4.0%	118,500
	Ջերմուկ	90,800	16.3%	105,600	4.5%	101,100
Տավուշ	Դիլիջան	119,200	20.7%	143,900	8.2%	133,000
	Իջևան	118,700	14.3%	135,700	4.7%	129,600
	Բերդ	90,000	7.1%	96,400	3.6%	93,050
	Նոյեմբերյան	69,400	17.3%	81,400	5.4%	77,200
	Այրում	57,800	-2.6%	56,300	2.4%	55,000


Գնային փոփոխությունների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2022 թվականի առաջին եռամսյակում մարզերի քաղաքներում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1 մ² մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները 2021 թվականի չորրորդ եռամսյակի համեմատ՝ աճել են 5.0%-ով, իսկ 2021 թվականի առաջին եռամսյակի համեմատ՝ աճել 15.5%-ով:

3.7 Հողերի առուվաճառքի գործարքների վերլուծություն

3.7.1 Հանրապետությունում 2022 թվականի առաջին եռամսյակում իրականացվել է հողերի առուվաճառքի 4,997 գործարք: 2022 թվականի առաջին եռամսյակում հանրապետությունում գրանցված հողերի առուվաճառքի գործարքների քանակը 2021 թվականի չորրորդ եռամսյակի համեմատ նվազել է 28.7 %-ով, 2021 թվականի առաջին եռամսյակի համեմատ՝ աճել 1.5 %-ով:

Գծապատկեր 3.7-1-ում ներկայացված է 2022 թվականի առաջին եռամսյակում հանրապետությունում իրականացված հողերի առուվաճառքի գործարքների տոկոսային բաշխվածությունը ըստ Երևան քաղաքի և մարզերի:

Գծապատկեր 3.7-1



Աղյուսակ 3.7-1-ում ներկայացված է 2022 թվականի առաջին եռամսյակում հանրապետությունում իրականացված հողերի առուվաճառքի գործարքների քանակական համեմատությունը 2021 թվականի առաջին և չորրորդ եռամսյակների նկատմամբ:


Աղյուսակ 3.7-1

	2021 թվականի առաջին եռամսյակ	փոփոխումը	2022 թվականի առաջին եռամսյակ	փոփոխումը	2021 թվականի չորրորդ եռամսյակ
Երևան	280	32.9%	372	-3.4%	385
Արագածոտն	541	-22.2%	421	-42.8%	736
Արարատ	896	5.2%	943	-27.7%	1,304
Արմավիր	845	6.5%	900	-35.9%	1,404
Գեղարքունիք	194	23.7%	240	-13.7%	278
Լոռի	307	-33.6%	204	-42.2%	353
Կոտայք	1,238	6.7%	1,321	-21.1%	1,675
Շիրակ	206	-24.8%	155	-30.8%	224
Սյունիք	106	10.4%	117	-18.2%	143
Վայոց ձոր	103	7.8%	111	-51.7%	230
Տավուշ	205	3.9%	213	-23.4%	278
Հանրապետություն	4,921	1.5%	4,997	-28.7%	7,010

3.7.2 Երևան քաղաքում 2022 թվականի առաջին եռամսյակում իրականացվել է հողերի առուվաճառքի 372 գործարք: 2022 թվականի առաջին եռամսյակում Երևան քաղաքում հողերի առուվաճառքի գործարքների քանակը 2021 թվականի չորրորդ եռամսյակի համեմատ նվազել է 3.4 %-ով, իսկ 2021 թվականի առաջին եռամսյակի համեմատ՝ աճել 32.9 %-ով:

Գծապատկեր 3.7-2-ում ներկայացված է 2022 թվականի առաջին եռամսյակում Երևան քաղաքում հողի առուվաճառքի գործարքների քանակական բաշխվածությունը ըստ վարչական շրջանների:

Գծապատկեր 3.7-2



2022 թվականի առաջին եռամսյակում Երևան քաղաքում հողերի առուվաճառքի գործարքների առավել բարձր տոկոսաչափ՝ 24.2 %, արձանագրվել է Մալաթիա-Սեբաստիա, իսկ առավել ցածրը՝ 2.2 %՝ Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջաններում:

2022 թվականի առաջին եռամսյակում Երևան քաղաքում իրականացվել է հողերի առուվաճառքի 372 գործարք՝ 33.77 հա ընդհանուր մակերեսով, որոնք, ըստ նպատակային նշանակության, բաշխվել են հետևյալ կերպ.

- գյուղատնտեսական նշանակության հող՝ 74 միավոր (9.26 հա),
- բնակելի կառուցապատման (տնամերձ) հող՝ 199 միավոր (11.79 հա),
- հասարակական կառուցապատման հող՝ 85 միավոր (9.42 հա),
- արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հող՝ 13 միավոր (3.28 հա),
- հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հող՝ 1 միավոր (0.02 հա):

Երևան քաղաքում վաճառված հողերի քանակի 4.8 %-ը կամ 18 միավոր (0.64 հա) ընդհանուր մակերեսով հանդիսացել է պետական կամ համայնքային սեփականության հող, իսկ 95.2 %-ը կամ 354 միավոր (33.13 հա)՝ մասնավոր սեփականության հող:

Աղյուսակ 3.7-2-ում ներկայացված է 2022 թվականի առաջին եռամսյակում Երևան քաղաքում պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների

բաշխվածությունն ըստ վարչական շրջանների և հողերի նպատակային նշանակության՝ բացառությամբ հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերի.

Աղյուսակ 3.7-2

Վարչական շրջան	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողեր								Մասնավոր սեփականություն հանդիսացող հողեր							
	գյուղ. նշանակության		արդյունաբերական		բնակավայրերի				գյուղ. նշանակության		արդյունաբերական		բնակավայրերի			
					բնակելի կառուցապատման		հասարակական կառուցապատման						բնակելի կառուցապատման		հասարակական կառուցապատման	
	միավոր	մակերես (հա)	միավոր	մակերես (հա)	միավոր	մակերես (հա)	միավոր	մակերես (հա)	միավոր	մակերես (հա)	միավոր	մակերես (հա)	միավոր	մակերես (հա)	միավոր	մակերես (հա)
Դավթաշեն	0	0.00	0	0.00	2	0.11	0	0.00	0	0.00	2	0.01	26	1.48	7	0.50
Էրեբունի	0	0.00	0	0.00	1	0.01	0	0.00	0	0.00	3	0.68	4	0.24	3	0.08
Աջափնյակ	0	0.00	0	0.00	4	0.20	1	0.01	0	0.00	2	1.76	40	3.59	23	2.17
Ավան	0	0.00	0	0.00	0	0.00	1	0.003	0	0.00	0	0.00	3	0.30	9	1.33
Արարկիր	0	0.00	0	0.00	0	0.00	1	0.26	0	0.00	1	0.16	20	1.03	2	0.21
Կենտրոն	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	2	0.49	8	0.65	3	0.23
Մալաթիա-Սեբաստիա	0	0.00	0	0.00	3	0.02	1	0.003	61	7.99	1	0.06	19	0.75	5	0.64
Քանաքեռ-Զեյթուն	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	4	0.38	4	0.16
Շենգավիթ	0	0.00	0	0.00	2	0.01	1	0.004	13	1.27	2	0.12	28	1.05	8	1.61
Նոր Նորք	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	19	1.17	7	0.23
Նորք-Մարաշ	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	7	0.40	8	1.94
Նուբարաշեն	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	9	0.40	1	0.04
Ընդամենը	0	0.00	0	0.00	12	0.35	5	0.28	74	9.26	13	3.28	187	11.44	80	9.14

Աղյուսակ 3.7-3-ում ներկայացված է 2022 թվականի առաջին եռամսյակում պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի աճուրդային և ուղղակի վաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունն ըստ վարչական շրջանների և հողերի նպատակային նշանակության.

Աղյուսակ 3.7-3


Վարչական շրջան	Հողերի ուղղակի վաճառք								Հողերի աճուրդ վաճառք									
	արդյունաբերական		բնակավայրերի հողեր				ընդամենը		գյուղ. նշանակության		արդյունաբերական		բնակավայրերի հողեր				ընդամենը	
			բնակելի կառուցապատման		հասարակական կառուցապատման								բնակելի կառուցապատման		հասարակական կառուցապատման			
	միավոր	մակերես (հա)	միավոր	մակերես (հա)	միավոր	մակերես (հա)	միավոր	մակերես (հա)	միավոր	մակերես (հա)	միավոր	մակերես (հա)	միավոր	մակերես (հա)	միավոր	մակերես (հա)	միավոր	մակերես (հա)
Դավթաշեն	0	0.00	2	0.11	0	0.00	2	0.11	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00
Էրեբունի	0	0.00	1	0.01	0	0.00	1	0.01	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00
Աջափնյակ	0	0.00	4	0.20	1	0.01	5	0.21	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00
Ավան	0	0.00	0	0.00	1	0.003	1	0.003	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00
Արարկիր	0	0.00	0	0.00	1	0.26	1	0.26	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00
Կենտրոն	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00
Մալաթիա-Սեբաստիա	0	0.00	3	0.02	1	0.003	4	0.023	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00
Քանաքեռ-Զեյթուն	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00
Շենգավիթ	0	0.00	2	0.01	1	0.004	3	0.014	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00
Նոր Նորք	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00
Նորք-Մարաշ	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00
Նուբարաշեն	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00
Ընդամենը	0	0.00	12	0.35	5	0.28	17	0.63	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00

2022 թվականի առաջին եռամսյակում Երևան քաղաքում հողերի անուրդային վաճառքի գործարք չի գրանցվել:

3.7.3 Մարզերում 2022 թվականի առաջին եռամսյակում իրականացվել է հողերի առուվաճառքի 4,625 գործարք, ընդ որում՝ նշված առուվաճառքի գործարքների 85.3 %-ը գրանցվել է գյուղական բնակավայրերում: 2022 թվականի առաջին եռամսյակում մարզերում հողերի առուվաճառքի գործարքների քանակը 2021 թվականի չորրորդ եռամսյակի համեմատ նվազել է 30.2 %-ով, իսկ 2021 թվականի առաջին եռամսյակի համեմատ՝ 0.3 %-ով:

Գծապատկեր 3.7-3-ում ներկայացված է 2022 թվականի առաջին եռամսյակում մարզերում իրականացված հողերի առուվաճառքի գործարքների քանակական բաշխվածությունը.

Գծապատկեր 3.7-3



Մարզերում 2022 թվականի առաջին եռամսյակում հողերի առուվաճառքի գործարքների առավել բարձր տոկոսաչափ՝ 28.6 %, գրանցվել է Կոտայքի, իսկ առավել ցածրը՝ 2.4 % Վայոց Ձորի մարզերում:

2022 թվականի առաջին եռամսյակում մարզերում իրականացվել է հողերի առուվաճառքի 4,625 գործարք՝ 2663.21 հա ընդհանուր մակերեսով, որոնք, ըստ նպատակային նշանակության, բաշխվել են հետևյալ կերպ.

- գյուղատնտեսական նշանակության հող՝ 2,852 միավոր (2483.72 հա),
- բնակելի կառուցապատման (տնամերձ) հող՝ 1,518 միավոր (137.94 հա),
- հասարակական կառուցապատման հող՝ 174 միավոր (17.90 հա),
- արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հող՝ 42 միավոր (9.86 հա),
- առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հող՝ 35 միավոր (11.43 հա),

- հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հող՝ 3 միավոր (1.58 հա),
- ջրային հող՝ 1 միավոր (0.78 հա):

Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Արմավիրի մարզում՝ 807.36 հա, որից 775.95 հա՝ գյուղատնտեսական նշանակության:

Մարզերում վաճառված հողերի քանակի 4.2 %-ը կամ 195 միավորը (208.77 հա) հանդիսացել է պետական կամ համայնքային սեփականության հող, իսկ 95.8 %-ը կամ 4,430 միավորը (2454.44 հա)՝ մասնավոր սեփականության հող: 2022 թվականի առաջին եռամսյակում մարզերում գրանցվել է վարձակալության իրավունքի վաճառքի 25 գործարք (24.07 հա), այդ թվում նաև կառուցապատման իրավունքի:

Աղյուսակ 3.7-4-ում ներկայացված է 2022 թվականի առաջին եռամսյակում պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունն ըստ մարզերի՝ բացառությամբ առողջարարական նպատակով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների և ջրային հողերի:

Աղյուսակ 3.7-4

Վարչական շրջան	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողեր								Մասնավոր սեփականություն հանդիսացող հողեր							
	գյուղ. նշանակության		արդյունաբերական		բնակավայրերի				գյուղ. նշանակության		արդյունաբերական		բնակավայրերի			
					բնակելի կառուցապատման		հասարակական կառուցապատման						բնակելի կառուցապատման		հասարակական կառուցապատման	
	միավոր	մակերես (հա)	միավոր	մակերես (հա)	միավոր	մակերես (հա)	միավոր	մակերես (հա)	միավոր	մակերես (հա)	միավոր	մակերես (հա)	միավոր	մակերես (հա)	միավոր	մակերես (հա)
Արագածոտն	10	55.58	0	0.00	0	0.00	1	0.17	257	323.01	1	0.27	142	13.92	10	0.64
Արարատ	4	22.63	0	0.00	1	0.02	1	0.01	638	297.46	15	6.14	254	20.13	30	2.40
Արմավիր	3	14.01	0	0.00	3	0.06	4	0.06	604	761.94	3	0.70	270	27.89	11	1.71
Գեղարքունիք	53	51.41	0	0.00	3	0.12	0	0.00	103	55.77	0	0.00	67	6.99	12	2.38
Լոռի	21	16.36	0	0.00	8	0.02	13	0.59	87	67.88	0	0.00	59	5.46	15	3.24
Կոտայք	3	5.56	1	0.01	19	0.81	1	0.10	694	519.27	16	2.29	524	42.51	35	2.44
Շիրակ	0	0.00	0	0.00	1	0.0004	1	2.50	102	116.55	2	0.19	38	5.39	11	0.69
Սյունիք	4	3.67	0	0.00	11	2.34	0	0.00	69	60.57	1	0.03	24	2.71	8	0.18
Վայոց ձոր	16	26.81	0	0.00	0	0.00	0	0.00	64	37.58	0	0.00	19	1.93	12	0.29
Տավուշ	1	3.49	0	0.00	0	0.00	0	0.00	119	44.17	3	0.23	75	7.64	9	0.50
Ընդամենը	115	199.52	1	0.01	46	3.37	21	3.43	2737	2284.20	41	9.85	1472	134.57	153	14.47

Աղյուսակ 3.7-5-ում ներկայացված է 2022 թվականի առաջին եռամսյակում պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի աճուրդային և ուղղակի վաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունն ըստ մարզերի և ըստ հողերի նպատակային նշանակության՝ բացառությամբ առողջարարական նպատակով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերի:

Վարչական շրջան	Հողերի ուղղակի վաճառք								Հողերի աճուրդ վաճառք									
	արդյունաբերական		բնակավայրերի հողեր				ընդամենը		գյուղ. նշանակությամբ		արդյունաբերական		բնակավայրերի հողեր				ընդամենը	
			բնակելի կառուցապատման		հասարակական կառուցապատման								բնակելի կառուցապատման		հասարակական կառուցապատման			
	միավոր	մակերես (հա)	միավոր	մակերես (հա)	միավոր	մակերես (հա)	միավոր	մակերես (հա)	միավոր	մակերես (հա)	միավոր	մակերես (հա)	միավոր	մակերես (հա)	միավոր	մակերես (հա)		
Արագածոտն	0	0.00	0	0.00	1	0.17	1	0.17	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00
Արարատ	0	0.00	1	0.02	1	0.01	2	0.03	1	0.08	0	0.00	0	0.00	0	0.00	1	0.08
Արմավիր	0	0.00	3	0.06	2	0.01	5	0.07	3	14.01	0	0.00	0	0.00	2	0.05	5	14.06
Գեղարքունիք	0	0.00	2	0.004	0	0.00	2	0.004	0	0.00	0	0.00	1	0.12	0	0.00	1	0.12
Լոռի	0	0.00	7	0.01	8	0.18	15	0.19	19	15.93	0	0.00	1	0.01	5	0.41	25	16.35
Կոտայք	1	0.01	15	0.58	0	0.00	16	0.59	2	5.04	0	0.00	4	0.23	1	0.10	7	5.37
Շիրակ	0	0.00	1	0.0004	1	2.50	2	2.50	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00
Սյունիք	0	0.00	2	0.02	0	0.00	2	0.02	4	3.67	0	0.00	9	2.32	0	0.00	13	5.99
Վայոց ձոր	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	15	26.71	0	0.00	0	0.00	0	0.00	15	26.71
Տավուշ	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	1	3.49	0	0.00	0	0.00	0	0.00	1	3.49
Ընդամենը	1	0.01	31	0.69	13	2.87	45	3.57	45	68.93	0	0.00	15	2.68	8	0.56	68	72.17

2022 թվականի առաջին եռամսյակում հանրապետության մարզերում արձանագրվել է նաև գյուղատնտեսական նշանակության հողերի ուղղակի վաճառքի 70 գործարք՝ 130.59 հա ընդհանուր մակերեսով:

2022 թվականի առաջին եռամսյակում մարզերում գրանցվել է հողերի աճուրդային վաճառքի 77 գործարք, ընդ որում՝ աճուրդային վաճառքի գործարքների քանակը 2021 թվականի չորրորդ եռամսյակի համեմատ նվազել է 92.2 %-ով, իսկ 2021 թվականի առաջին եռամսյակի համեմատ՝ 88.1%-ով: Գյուղատնտեսական նշանակության հողերի աճուրդային վաճառքի գործարքների քանակը 2021 թվականի չորրորդ եռամսյակի համեմատ նվազել է 91.4 %-ով, իսկ 2021 թվականի առաջին եռամսյակի համեմատ՝ 85.4 %-ով, բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերը 2021 թվականի չորրորդ եռամսյակի համեմատ նվազել՝ 92.9 %-ով, իսկ 2021 թվականի առաջին եռամսյակի համեմատ՝ 92.1 %-ով, հասարակական կառուցապատման հողերը 2021 թվականի չորրորդ եռամսյակի համեմատ նվազել՝ 95.8 %-ով, իսկ 2021 թվականի առաջին եռամսյակի համեմատ՝ 93.3 %-ով, արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի աճուրդային վաճառքի գործարքներ 2021 թվականի առաջին եռամսյակում չի գրանցվել:

Աղյուսակ 3.7-6-ում ներկայացված է 2022 թվականի առաջին եռամսյակում Հանրապետության առավել ակտիվ քաղաքներում՝ Բաղրամյան Երևան քաղաքի, վաճառված բնակավայրերի հողերի պայմանագրային միջին գների վերլուծության արդյունքները 1մ² մակերեսի հաշվարկով.

Մարզ	Քաղաք	2021 թվականի առաջին եռամսյակ	փոփոխումը	2022 թվականի առաջին եռամսյակ	փոփոխումը	2021 թվականի չորրորդ եռամսյակ
Արագածոտն	Աշտարակ	11,100	0.9%	11,200	-1.8%	11,400
	Ապարան	3,100	3.2%	3,200	-3.0%	3,300
Արարատ	Արտաշատ	9,800	4.1%	10,200	1.0%	10,100
	Մասիս	8,400	8.3%	9,100	1.1%	9,000
	Վեդի	3,100	9.7%	3,400	3.0%	3,300
Արմավիր	Վաղարշապատ	12,500	-1.6%	12,300	-0.8%	12,400
	Արմավիր	9,400	-2.1%	9,200	-1.1%	9,300
Գեղարքունիք	Սևան	4,400	9.1%	4,800	2.1%	4,700
	Մարտունի	1,800	11.1%	2,000	2.6%	1,950
	Վարդենիս	1,150	13.0%	1,300	0.0%	1,300
Լոռի	Վանաձոր	9,500	10.5%	10,500	1.9%	10,300
	Ստեփանավան	3,300	9.1%	3,600	2.9%	3,500
	Ալավերդի	3,100	0.0%	3,100	3.3%	3,000
Կոտայք	Աբովյան	9,900	12.1%	11,100	2.8%	10,800
	Հրազդան	4,600	8.7%	5,000	2.0%	4,900
Շիրակ	Գյումրի	8,300	14.5%	9,500	3.3%	9,200
Սյունիք	Գորիս	4,900	6.1%	5,200	0.0%	5,200
	Կապան	2,600	11.5%	2,900	3.6%	2,800
	Մեղրի	1,800	0.0%	1,800	0.0%	1,800
Վայոց ձոր	Եղեգնաձոր	4,200	14.3%	4,800	4.3%	4,600
	Ջերմուկ	5,700	1.8%	5,800	1.8%	5,700
Տավուշ	Դիլիջան	8,300	7.2%	8,900	2.3%	8,700
	Իջևան	3,900	7.7%	4,200	2.4%	4,100
	Նոյեմբերյան	2,300	4.3%	2,400	4.3%	2,300


4 ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՐՔՆԵՐ

4.1 Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկայում իրականացված վարձակալության գործարքների վերլուծություն

4.1.1 2022 թվականի առաջին եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել է 2,209 վարձակալության գործարք, որը կազմել է անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների ընդհանուր քանակի 5.1 %-ը:

2011-2021 թվականների առաջին եռամսյակ ամսվա անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակները ներկայացված են Գծապատկեր 4.1-1-ում.


Գծապատկեր 4.1-1




4.1.2 Հանրապետությունում 2022 թվականի առաջին եռամսյակում անշարժ գույքի վարձակալության գործարքների առավել բարձր տոկոսաչափ՝ 63.4 %, գրանցվել է Երևան քաղաքում, իսկ առավել ցածրը՝ 1.6 %՝ Արագածոտնի մարզում:

Գծապատկեր 4.1-2-ում և Գծապատկեր 4.1-3-ում ներկայացված է 2022 թվականի առաջին եռամսյակում հանրապետությունում անշարժ գույքի վարձակալության գործարքների տոկոսային և քանակական բաշխվածությունը ըստ Երևան քաղաքի և մարզերի.

Հանրապետությունում վարձակալության գործարքների տոկոսային բաշխվածությունը



Հանրապետությունում վարձակալության գործարքների քանակական բաշխվածությունը



	Երևան	Արագածոտն	Արարատ	Արմավիր	Գեղարքունիք	Լոռի	Կոտայք	Շիրակ	Սյունիք	Վայոց Ձոր	Տավուշ
2021թ. առաջին եռամսյակ	1231	112	117	71	412	96	90	80	129	72	119
2022թ. առաջին եռամսյակ	1401	36	103	72	85	96	107	66	105	54	84
2021թ. չորրորդ եռամսյակ	1361	84	212	177	337	172	152	106	157	57	104

Աղյուսակ 4.1-1-ում ներկայացված է 2022 թվականի առաջին եռամսյակում հանրապետությունում իրականացված վարձակալության գործարքների քանակական համեմատությունը 2021 թվականի առաջին և չորրորդ եռամսյակների նկատմամբ:


	2021 թվականի առաջին եռամսյակ	փոփոխումը	2022 թվականի առաջին եռամսյակ	փոփոխումը	2021 թվականի չորրորդ եռամսյակ
Երևան	1,231	13.8%	1,401	2.9%	1,361
Արագածոտն	112	-67.9%	36	-57.1%	84
Արարատ	117	-12.0%	103	-51.4%	212
Արմավիր	71	1.4%	72	-59.3%	177
Գեղարքունիք	412	-79.4%	85	-74.8%	337
Լոռի	96	0.0%	96	-44.2%	172
Կոտայք	90	18.9%	107	-29.6%	152
Շիրակ	80	-17.5%	66	-37.7%	106
Սյունիք	129	-18.6%	105	-33.1%	157
Վայոց ձոր	72	-25.0%	54	-5.3%	57
Տավուշ	119	-29.4%	84	-19.2%	104
Հանրապետություն	2,529	-12.7%	2,209	-24.3%	2,919

2022 թվականի առաջին եռամսյակում հանրապետությունում գրանցված վարձակալության գործարքների քանակը 2021 թվականի չորրորդ եռամսյակի համեմատ նվազել է 24.3 %-ով, իսկ 2021 թվականի առաջին եռամսյակի համեմատ՝ 12.7 %-ով:


4.1.3 Հանրապետությունում 2022 թվականի առաջին եռամսյակում վարձակալության գործարքների առավել բարձր տոկոսաչափը՝ 44.7 %, գրանցվել է հասարակական նշանակության շինությունների, առավել ցածրը՝ 0.8 %՝ ավտոտնակների նկատմամբ: Հողերի նկատմամբ իրականացվել է 389 միավոր վարձակալության գործարք՝ 1439.67 ընդհանուր մակերեսով, որից 9 միավորը՝ 0.11 հա մակերեսով, սերվիտուտի իրավունքի գրանցում, ընդ որում՝ առավել մեծ՝ 905.08 հա ընդհանուր մակերեսով հողամասեր վարձակալվել են Վայոց ձորի մարզում:

Գծապատկեր 4.1-4-ում և Գծապատկեր 4.1-5-ում ներկայացված է 2022 թվականի առաջին եռամսյակում հանրապետությունում իրականացված վարձակալության գործարքների տոկոսային և քանակական բաշխվածությունը ըստ գույքի տեսակների:

Հանրապետությունում վարձակալության գործարքների տոկոսային բաշխվածությունը ըստ գույքի տեսակի



Հանրապետությունում վարձակալության գործարքների քանակական բաշխվածությունը ըստ գույքի տեսակի



Աղյուսակ 4.1-2-ում ներկայացված է 2022 թվականի առաջին եռամսյակում հանրապետությունում իրականացված վարձակալության գործարքների քանակական համեմատությունը 2021 թվականի առաջին և չորրորդ եռամսյակների նկատմամբ:

Աղյուսակ 4.1-2

Հ/Հ	Գույքի տեսակ	2021 թվականի առաջին եռամսյակ	փոփոխումը	2022 թվականի առաջին եռամսյակ	փոփոխումը	2021 թվականի չորրորդ եռամսյակ
1	Բնակարան	456	-10.1%	410	-4.2%	428
2	Անհատական բնակելի տուն	203	-13.3%	176	-2.8%	181
3	Արտադրական նշ. շին	179	27.9%	229	4.6%	219
4	Հասարակական նշ. շին.	937	5.4%	988	-10.5%	1,104
5	Ավտոտնակ	102	-83.3%	17	-5.6%	18
6	Հող	652	-40.3%	389	-59.9%	969
6ա	ա/թ գյուղատնտ. նշ. հող	540	-77.0%	124	-80.5%	636
Ընդամենը		2,529	-12.7%	2,209	-24.3%	2,919

Աղյուսակ 4.1-3-ում ներկայացված է հանրապետությունում 2022 թվականի առաջին եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ գրանցված վարձակալության գործարքների քանակական և տոկոսային բաշխվածությունը ըստ գույքի տեսակի.

Աղյուսակ 4.1-3


Գույքի տեսակ		Հանրապետություն		Երևան			Մարզերի քաղաքային բնակավայրեր			Գյուղական բնակավայրեր		
		քանակ	%	քանակ	%	տեսակարար կշիռը նմանատիպ գործարքներում	քանակ	%	տեսակարար կշիռը նմանատիպ գործարքներում	քանակ	%	տեսակարար կշիռը նմանատիպ գործարքներում
1	Բնակարան	410	18.6%	221	15.8%	53.9%	181	34.7%	44.1%	8	2.8%	2.0%
2	Անհատական բնակելի տուն	176	8.0%	96	6.9%	54.5%	60	11.5%	34.1%	20	7.0%	11.4%
3	Արտադրական նշ. շին	229	10.4%	149	10.6%	65.1%	43	8.2%	18.8%	37	12.9%	16.2%
4	Հասարակական նշ. շին.	988	44.7%	709	50.6%	71.8%	209	40.0%	21.2%	70	24.5%	7.1%
5	Ավտոտնակ	17	0.8%	17	1.2%	100.0%	0	0.0%	0.0%	0	0.0%	0.0%
6	Հող	389	17.6%	209	14.9%	53.7%	29	5.6%	7.5%	151	52.8%	38.8%
6ա	Ա/թ գյուղատնտ. նշ. հող	124	5.6%	1	0.1%	0.8%	5	1.0%	4.0%	118	41.3%	95.2%
Ընդամենը /գործարք/		2,209	100.0%	1,401	100.0%	63.4%	522	100.0%	23.6%	286	100.0%	12.9%

4.2 Երևան քաղաքում անշարժ գույքի շուկայում իրականացված վարձակալության գործարքների վերլուծություն

4.2.1 2022 թվականի առաջին եռամսյակում Երևան քաղաքում գրանցվել է 1,401 վարձակալության գործարք, որը 2021 թվականի չորրորդ եռամսյակի համեմատ աճել է 2.9 %-ով, իսկ 2021 թվականի առաջին եռամսյակի համեմատ՝ 13.8 %-ով: Երևան քաղաքում անշարժ գույքի վարձակալության գործարքներից առավել բարձր տոկոսաչափ՝ 32.3 %, գրանցվել է Կենտրոն, իսկ առավել ցածրը՝ 0.6 %՝ Նորք-Մարաշ վարչական շրջաններում:

Գծապատկեր 4.2-1-ում ներկայացված է 2022 թվականի առաջին եռամսյակում Երևան քաղաքում իրականացված վարձակալության գործարքների քանակական բաշխվածությունը ըստ վարչական շրջանների:

Գծապատկեր 4.2-1



Աղյուսակ 4.2-1-ում ներկայացված է 2022 թվականի առաջին եռամսյակում Երևան քաղաքում իրականացված վարձակալության գործարքների քանակական համեմատությունը 2021 թվականի առաջին և չորրորդ եռամսյակների նկատմամբ:


Աղյուսակ 4.2-1

Վարչական շրջան	2021 թվականի առաջին եռամսյակ	փոփոխումը	2022 թվականի առաջին եռամսյակ	փոփոխումը	2021 թվականի չորրորդ եռամսյակ
Դավթաշեն	36	19.4%	43	48.3%	29
Էրեբունի	69	30.4%	90	16.9%	77
Աջափնյակ	92	-7.6%	85	2.4%	83
Ավան	39	-7.7%	36	-10.0%	40
Արարկիր	167	24.0%	207	2.0%	203
Կենտրոն	444	2.0%	453	6.3%	426
Մալաթիա-Սեբաստիա	102	19.6%	122	9.9%	111
Քանաքեռ-Զեյթուն	71	-12.7%	62	-1.6%	63
Շենգավիթ	111	48.6%	165	0.0%	165
Նոր Նորք	79	45.6%	115	-17.3%	139
Նորք-Մարաշ	14	-35.7%	9	-52.6%	19
Նուբարաշեն	7	2.0 անգամ	14	2.3 անգամ	6
Երևան	1,231	13.8%	1,401	2.9%	1,361

4.2.2 Երևան քաղաքում 2022 թվականի առաջին եռամսյակում վարձակալության գործարքների առավել բարձր տոկոսաչափ՝ 50.6 %, գրանցվել է հասարակական նշանակության շինությունների, առավել ցածր՝ 1.2 %, ավտոտնակների նկատմամբ : Երևան քաղաքում իրականացվել է հողերի վարձակալության 209 գործարք՝ 17.02 հա մակերեսով, որից 5 միավորը՝ 0.04 հա մակերեսով, սերվիտուտի իրավունքի գրանցում:

Գծապատկեր 4.2-2-ում ներկայացված է 2022 թվականի առաջին եռամսյակում Երևան քաղաքում անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակական բաշխվածությունը ըստ գույքի տեսակի.

Գծապատկեր 4.2-2



Աղյուսակ 4.2-2-ում ներկայացված է 2022 թվականի առաջին եռամսյակում Երևան քաղաքում իրականացված վարձակալության գործարքների քանակական համեմատությունը 2021 թվականի առաջին և չորրորդ եռամսյակների նկատմամբ:

Աղյուսակ 4.2-2

Հ/Հ	Գույքի տեսակ	2021 թվականի առաջին եռամսյակ	փոփոխում ը	2022 թվականի առաջին եռամսյակ	փոփոխում ը	2021 թվականի չորրորդ եռամսյակ
1	Բնակարան	224	-1.3%	221	-10.9%	248
2	Անհատական բնակելի տուն	81	18.5%	96	29.7%	74
3	Արտադրական նշ. շին	125	19.2%	149	16.4%	128
4	Հասարակական նշ. շին.	699	1.4%	709	-4.1%	739
5	Ավտոտնակ	92	-81.5%	17	2.1 անգամ	8
6	Հող	10	20.9 անգամ	209	27.4%	164
6ա	ա/թ գյուղատնտ. նշ. հող	1	0.0%	1	-66.7%	3
Ընդամենը		1,231	13.8%	1,401	2.9%	1,361

4.3 Մարզերում անշարժ գույքի շուկայում իրականացված վարձակալության գործարքների վերլուծություն


2022 թվականի առաջին եռամսյակում մարզերում գրանցվել է 808 վարձակալության գործարք, որը 2021 թվականի չորրորդ եռամսյակի համեմատ նվազել է 48.1 %-ով, 2021 թվականի առաջին եռամսյակի համեմատ՝ 37.8 %-ով, մարզերի քաղաքային բնակավայրերում գրանցված վարձակալության գործարքների քանակը 2021 թվականի չորրորդ եռամսյակի համեմատ նվազել է 39.9 %-ով, 2021 թվականի առաջին եռամսյակի համեմատ՝ 40.3 %-ով, իսկ գյուղական բնակավայրերում 2021 թվականի չորրորդ եռամսյակի համեմատ նվազել է 58.5 %-ով, 2021 թվականի առաջին եռամսյակի համեմատ՝ 32.5 %-ով:

